

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՍԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Բնակչության եկամուտների ձևավորման հարցերի պարզաբանման փորձեր են արել դեռևս Հին աշխարհի փիլիսոփաները: Քսենոֆոնի, Պլատոնի, Արիստոտելի աշխատություններում շարադրված են հարստության, բնակչության եկամուտների ձևավորման և բաշխման վերաբերյալ մի շարք ելակետային դրույթներ: Հին Հռոմի հարկային քաղաքականությունը նույնպես պահանջում էր ազատ քաղաքացիների եկամուտների մանրակրկիտ հաշվառում: Ֆեոդալիզմի դարաշրջանում վիճակագրական հաշվառման պարզունակ համակարգի գոյությունը պայմանավորված էր առանձին եկեղեցական և ֆեոդալական տնտեսությունների պահանջներով: Այդ տնտեսությունների շրջանակներում հաշվի էին առնվում եկամուտների չափերը, առկա տնտեսական գույքը և այլն¹: Բնակչության եկամուտների հաշվառումը պայմանավորված էր միայն գործնական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որը կապված էր համապատասխան տվյալների հավաքագրման ու մշակման և այդ հիմքի վրա ուսումնասիրվող երևույթների ու գործընթացների վերաբերյալ թվային բնութագրի ստացման հետ:

Բնակչության եկամուտների որակական բնութագրի ուսումնասիրության հիմնախնդիրը փորձեցին լուծել մերկանտիլիստները (որոնց հիմնական ներկայացուցիչներն էին. Անգլիայում՝ Ու. Ստաֆորդը և Թ. Մենը, Իտալիայում՝ Ա. Սերան, Ֆրանսիայում՝ Ա. Մոնկրետիենը և Ժ.-Բ. Կուլբերը): Նրանք բնակչության բարեկեցությունը և եկամուտների աճը պայմանավորում էին հարստության՝ ոսկու և արծաթի կուտակմամբ: Մերկանտիլիստները կարծում էին, որ աշխատավարձի ցածր մակարդակը պահպանելու համար պետք է խրախուսել բնակչության աճը, քանի որ դա հարստության բազմապատկման պայմանն է: Նրանք համարում էին, որ բնակչության դրամական եկամուտները մեծ չեն և պետության համար մեծ նշանակություն չունեն. դրանք պետական զանձարանի համալրման միայն լրացուցիչ աղբյուր են:

Եկամուտների՝ որպես տնտեսական կատեգորիայի ուսումնասիրության պատմական առանձին փուլ կարելի է հիշատակել ֆիզիոկրատների դպրոցը: Նրանք նույնպես մատնանշում էին, որ տնտեսական ծաղկման հիմքը աշխատանքից ստացվող դրամական եկամուտն է, սակայն առաջնությունը տալիս էին գյուղատնտեսական աշխատանքից առաջացող եկամտին: Այդ դպրոցի հիմնադիրներն էին Ֆրանսուա Բենեն, Անն Ռոբեր

¹ Стів Всемирная история экономической мысли, т. I, МГУ им. М.Ломоносова (гл. редкол.: В.Н. Черковец и др.). М., „Мысль“, 1987, էջ 485-486:

Ժակ Թյուրգոն: Ըստ Ֆ. Քենեի՝ զուտ արդյունքի (ժամանակակից ընկալմամբ՝ համախառն եկամտի - Ա. Թ.) աղբյուր են հողը և հողագործությամբ զբաղված մարդկանց աշխատանքը: Իսկ արդյունաբերությունում և տնտեսության մյուս ճյուղերում եկամտի զուտ հավելած չի առաջանում, այլ տեղի է ունենում արդյունքի նախասկզբնական ձևի փոփոխություն: Ֆ. Քենեն, ուսումնասիրելով բոլոր հատվածների և տնտեսական գործընթացների տարրերի համընդհանուր փոխկապվածությունները, ուշադրություն էր դարձնում եկամուտների ձևավորման վրա: Որպես վերլուծական սկզբունք՝ Քենեն օգտագործեց, այսպես կոչված, «թանկության և առատության» հիմնադրույթը: Աշխատավարձի հայեցակարգի հիմքում ընկած է նվազագույն կենսաապահովման դրույթը: Քենեի կարծիքով՝ փողը ծախսելուց ինչ-որ մեկի հրաժարվելը բացառում է անխուսափելիորեն մեկ ուրիշի եկամտի առաջացումը: Սա Քենեի կարևոր նվաճումներից մեկն է:

Քենեն հրապարակեց նաև ազգային տնտեսության առաջին համակարգված մոդելը՝ «տնտեսական աղյուսակի» տեսքով, որը, անկասկած, ազգային հաշիվների ժամանակակից համակարգի նախատիպն է:

Ֆիզիոկրատիկվմի մյուս ներկայացուցիչ Ա. Թյուրգոն, ընդունելով հասարակության դասակարգերի բաժանման Քենեի սկզբունքները, բանվորի աշխատավարձի էության և մեծության որոշման հարցերում համակարծիք էր ոչ թե Ֆ. Քենեի, այլ Վ. Պետիի հետ, դա համարելով «իր աշխատանքը մյուսներին վաճառելու» արդյունք: Ըստ նրա՝ «դա սահմանափակված է նրա գոյատևման համար անհրաժեշտ նվազագույնով, այսինքն՝ այն չափով, որը նրան անվերապահորեն անհրաժեշտ է գոյատևման համար»²: Սակայն, ի տարբերություն իյու նախորդների, Ա. Թյուրգոն աշխատավարձը դասեց այն տարրերի շարքը, որոնք ընկած են իր առաջ քաշած «ընդհանուր տնտեսական հավասարակշռություն» հասկացության հիմքում:

Տնտեսագիտության տեսության զարգացման գործում մեծ ներդրում ունեցող տեսություններից է դասական քաղաքատնտեսությունը: Նրա ներկայացուցիչների գաղափարները չեն կորցրել իրենց այժմեականությունը: Ի տարբերություն մերկանտիլիզմի ներկայացուցիչների, նրանք պետության բարեկեցության և բնակչության եկամուտների աճը կապում էին ոչ թե շրջանառության, այլ քաղաքացիների արտադրողական աշխատանքի հետ:

Բնակչության եկամուտների ուսումնասիրություններում անգլիացի տնտեսագետ Վ. Պետին կիրառեց խիստ կարևոր մոտեցում: Հարստությունը, ըստ նրա, ձևավորում են ոչ միայն թանկարժեք մետաղները և քարերը, ոչ միայն փողը, այլև հողը, տունը, նավը, ապրանքները և նույնիսկ տնային գործածության առարկաները: Վ. Պետին արտահայտում էր մեր օրերում շատ հայտնի հետևյալ միտքը. «Աշխատանքը հարստության հայրն է և ակտիվ աղբյուրը, իսկ հողը՝ մայրը»:

Վ. Պետին կարևորեց առաջնային եկամուտները: Եկամուտների տեսության մեջ նա և հետևորդները աշխատավարձը բնութագրեցին որպես

² Тюро А.Р., Избранные экономические произведения. М., „Соцэкгиз“ 1961, с.97-98.

բանվորի աշխատանքի գին, որը ապահովում է բանվորի և նրա ընտանիքի գոյատևման նվազագույն միջոցները³: Հարկ է նշել, որ հայտնի տնտեսագետի աշխատանքներում աշխատավարձի տեսություն, որպես այդպիսին, չկա, սակայն Պետին առաջիններից էր, որ առաջ քաշեց նվազագույն կենսաապահովման հիմնախնդիրը: Նա տոկոսի ստացումը դիտում է որպես ոչ աշխատանքային եկամուտ, որը, ըստ նրա, պայմանավորված ժամանակահատվածի համար սեփական գործոնների օգտագործումից ձեռնպահ մնալու դիմաց փոխհատուցում է: Վ. Պետին անվերապահորեն ժխտեց առևտրի և առևտրային կապիտալի մասնակցությունը ազգային հարստության ստեղծմանը՝ պնդելով նույնիսկ առևտրականների զգալի մասի կրճատման անհրաժեշտությունը⁴:

Բնակչության եկամուտների ձևավորման և դրանց կարգավորման հարցերում իրենց մեծ ավանդն են ունեցել Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, Ժ.-Բ. Մեյը և ուրիշներ, ովքեր առաջ քաշեցին տնտեսական գործընթացներին պետության չմիջամտելու սկզբունքը, փորձեցին շուկայական մեխանիզմի միջոցով լուծել բնակչության եկամուտների ձևավորման և կարգավորման խնդիրները:

Ա. Սմիթը մշակեց բնակչության եկամուտների հստակ դասակարգում: Դիտարկելով բնակչության եկամուտների ձևավորման հիմնախնդիրները՝ նա հանգեց այն եզրակացության, որ բանվորները ստանում են աշխատավարձ, կապիտալիստները՝ շահույթ, իսկ հողասեփականատերերը՝ ռենտա:

Ա. Սմիթը համարում էր, որ բանվորների եկամուտը՝ աշխատավարձը, ուղղակիորեն կախված է ազգային հարստությունից⁵, շահույթը, որպես կապիտալից ստացվող եկամուտ, որոշվում է՝ «կախված այդ կապիտալի չափերից, գործադրված կապիտալի արժեքով, լինում է ավելի կամ պակաս», և դա չպետք է շփոթել աշխատավարձի հետ, որը որոշվում է «աշխատանքի քանակին, ծանրությանը կամ բարդությանը համապատասխան»: Ըստ նրա՝ ձեռնարկատիրոջ շահույթի գումարը բանվորի կողմից ստեղծված արժեքի մի մասն է, որն ուղղվում է «ձեռնարկատիրոջ ամբողջ կապիտալի դիմաց շահույթի վճարմանը, որը նա ավանսավորել է նյութերի և աշխատավարձի տեսքով»⁶:

Ըստ Ա. Սմիթի՝ շուկայական հարաբերությունների յուրաքանչյուր մասնակից իր շահերը իրացնում է լրիվ ինքնուրույն՝ ձգտելով սեփական օգուտի: Այսպիսով՝ հետապնդելով անձնական նպատակ, մարդը նպաստում է հասարակական արդյունքի մեծացմանը, հասարակության եկամուտների աճին: «Տնտեսական մարդը», ելնելով սեփական շահերից, գործնականում, շատ հաճախ բնագդաբար, ավելի է ծառայում հասարակության շահերին, քան եթե ձգտի դա անել գիտակցաբար⁷: Հետևաբար՝ մարդու

³ Стэн Шапиро С.А., Ракович Н.Е., Сколько стоит труд?, М., ООО, „Вершина“, 2003, էջ 54:

⁴ Стэн Петти У., Экономические и статистические работы. М., „Соцэкгиз“, 1940, էջ 70-71:

⁵ Стэн Антология экономической мысли, т. I. М., „Эконом“, 1993, էջ 104:

⁶ Նույն տեղում, էջ 119:

⁷ Стэн նույն տեղը, էջ 322:

գործունեության գլխավոր տնտեսական շարժառիթը իր հարստության մեծացմանը և սոցիալական վիճակի բարելավմանը ձգտելու անձնական շահն է:

Ա.Սմիթը համեմատաբար ավելի քիչ ուշադրություն էր դարձնում ռենտային, քան Դ. Ռիկարդոն: Սակայն նրա առաջ քաշած շատ դրույթներ, այնուամենայնիվ, արժանի են ուշադրության: Մասնավորապես, ըստ Ա. Սմիթի, սննդամթերքը «միակ գյուղատնտեսական արդյունքն է, որը միշտ և անհրաժեշտաբար ապահովում է որոշ ռենտա սեփականատիրոջը»⁸: Հանդես գալով բանվորների աղքատության դեմ՝ Սմիթը կարծում էր, որ հասարակական առաջընթացի իրական շարժիչը կապիտալիստ ձեռնարկատերերն են: Իրենց գործունեությամբ նրանք նպաստում են ազգի հարստության մեծացմանը և դրա դիմաց ստանում են փոխհատուցում շահույթի ձևով:

Դասական դպրոցի մյուս ներկայացուցիչ Դ. Ռիկարդոն շարունակեց ռենտայի, շահույթի և աշխատավարձի էության հետազոտությունը: «Աշխատանքի բնական գինը» նա բնորոշեց որպես բանվորի հնարավորություն՝ իր աշխատանքով պահելու իրեն և իր ընտանիքը, վճարելու սննդի, կենսական անհրաժեշտության առարկաների և հարմարությունների ծախսերը, իսկ «աշխատանքի շուկայական գինը»՝ որպես վճար, որը ձևավորվում է՝ պայմանավորված աշխատանքի առաջարկի և պահանջարկի իրական հարաբերակցությամբ: Դ. Ռիկարդոն կատարեց հոռետեսական կանխատեսում՝ կապված աշխատավարձի մակարդակի շարժընթացի և ազգաբնակչության աճի տեմպի հարաբերակցության հետ:

Ռենտայի վերաբերյալ Դ. Ռիկարդոյի տեսակետը ընդունելի է նաև մեր օրերում: Նրա հիմնական գաղափարախոսությունն այն է, որ ռենտան միշտ վճարվում է հողօգտագործման համար, քանի որ հողի քանակությունը անսահման չէ, որակը նույնական չէ, իսկ բնակչության աճին զուգահեռ սկսում են մշակվել իրենց որակով և տեղադիրքով ավելի վատ հողակտորներ, որոնց վրա կատարված աշխատանքի ծախսումներով էլ որոշվում է գյուղատնտեսական մթերքի արժեքը: Ինչպես մեկնաբանում էր Դ. Ռիկարդոն՝ «հացը այն բանի համար չէ թանկ, որ վճարվում է ռենտա, այլ ռենտա վճարվում է, որովհետև հացը թանկ է», իսկ «ռենտան ապրանքի գնի բաղկացուցիչ մասը չէ»⁹:

Դ. Ռիկարդոյի ժամանակաշրջանում այն կարծիքն էր շրջանառվում (որը առաջին անգամ արտահայտեց Ջ. Միրը), թե ռենտան, որպես եկամուտ, ճիշտ կլինի վերցնել հարկի տեսքով՝ հօգուտ պետության: Սակայն, ինչպես նկատել է Մ. Բլաուզը, «եթե ռենտային գումարները հողասեփականատիրոջից անցնեն վարձակալին, գյուղատնտեսական արտադրանքի գները և գյուղատնտեսությունում շահույթի միջին նորման կմնան նույնը, քանի որ եկամտի փոխանցումը չի անդրադառնա հացահատիկի արտադ-

⁸ Նույն տեղում, էջ 221.

⁹ Նույն տեղում, էջ 225:

րության սահմանային ծախքերի վրա»¹⁰:

Միանշանակ չեն Դ. Ռիկարդոյի դատողությունները ձեռնարկատերերի շահույթի ձևավորման, շարժընթացի և աճի հեռանկարի մասին: Ուստի նրան հասկանալի էր այն երկնտանքը, թե «շահույթը կախված է բարձր կամ ցածր աշխատավարձից, իսկ աշխատավարձը՝ կենսականորեն անհրաժեշտ առարկաների գնից, քանի որ մյուս բոլոր սպառման առարկաների քանակը կարող է մեծանալ համարյա անսահման»¹¹: Ըստ Դ. Ռիկարդոյի՝ ազատ մրցակցության պայմաններում ինչպես աշխատավարձը, այնպես և «շահույթը ունի իջնելու բնական միտում, քանի որ հասարակության առաջընթացը և հարստությունը, որոնք պահանջում են սննդի լրացուցիչ քանակություն, ստացվում են ավելի ու ավելի շատ աշխատանքի ծախսումների արդյունքում»¹²: Ռիկարդոն կարծում էր, որ բանվորը ստեղծում է ավելի շատ արժեք, քան ստանում է աշխատավարձ: Շահույթը նա համարում է ապրանքի արժեքի և աշխատավարձի տարբերություն: Ռիկարդոն փորձեց որոշել ստեղծված արժեքը աշխատավարձի և շահույթի միջև բաշխելու համամասնությունը: Իր վերլուծության արդյունքում նա սահմանեց այդ երկու եկամուտների հակադարձ կախվածության օրենքը, համաձայն որի՝ մեկի փոփոխությունը հանգեցնում է մյուսի փոփոխությանը հակառակ ուղղությամբ:

Բնակչության եկամուտների դասական տեսության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Ժ.-Բ. Սեյի, Տ. Մաթուսի, Դ. Միլի տեսական ենթադրությունները:

Դասական քաղաքատնտեսության ֆրանսիական ուղղության ներկայացուցիչ Ժ.-Բ. Սեյը առաջ քաշեց արտադրության երեք գլխավոր գործոնների տեսությունը, համաձայն որի՝ հասարակական արտադրությունում փոխգործողության մեջ են մտնում երեք գլխավոր գործոններ. աշխատանքը, հողը և կապիտալը: Այդ դեպքում ապրանքների արժեքի և հասարակության եկամուտների ստեղծման գործում նշված գործոններից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը կախված է այն բանից, թե երեք դասակարգերից (բանվորներ, կապիտալիստներ և հողասեփականատերեր) ո՞վ է տնօրինում համապատասխան գործոնները: Սեյը կարծում էր, որ ազատ շուկայական տնտեսության պայմաններում կարող է ձեռք բերվել այդ գործոնների առավել արդյունավետ փոխգործողություն, և դասակարգերի միջև հարաբերությունները ներդաշնակ կլինեն: «Աշխատանք» գործոնը արժեքի ձևավորման մեջ ծնում է աշխատավարձը՝ որպես բանվորների եկամուտ: Ձեռնարկատիրոջ եկամուտները Ժ.-Բ. Սեյը բնորոշում է որպես «նրա արդյունաբերական կարողությունների, նրա տաղանդների, գործունեության, դիսկլի և ղեկավարման հատուցում»¹³:

¹⁰ Ялгаров Я.С., История экономических учений. М., ИНФРА, 2000, с. 114.

¹¹ Антология экономической мысли, նշվ. հրատ., էջ 225:

¹² Նույն տեղում:

¹³ Шапиро С.А., Ракович Н.Е., նշվ. աշխ., էջ 58:

Հասարակական արտադրության և արտադրողական աշխատանքի մասին Ա. Սմիթի հիմնադրույթների հիմքի վրա Ս. Մալթուսը առաջ քաշեց «երրորդ անձանց» մասին տեսական դրույթները, այսինքն՝ համախառն հասարակական արդյունքի ստեղծմանը և բաշխմանը ոչ միայն հասարակության արտադրողական, այլ նաև ոչ արտադրողական շերտերի մասնակցությունը: Դրանց շարքը դասեց հողատեր արխատկրատիային, պետական ծառայողներին, հոգևորականներին, այսինքն՝ բնակչության այն սոցիալական շերտերին, որոնք չեն ստեղծում լրացուցիչ արդյունք, սակայն ունեն եկամուտներ և ներկայացնում են պահանջարկ: Ս. Մալթուսը համարում էր նաև, որ եկամուտների լրիվ հավասարությունը պատրանք է և անիրականանալի, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կատարել եկամուտների օպտիմալ տարբերակում, որն էլ կնպաստի տնտեսական աճին:

Ջ. Միրը կարծում էր, որ արտադրողական աշխատանքից ստացվող եկամուտների սպառումն արտադրողական է այն դեպքում, եթե այդ սպառումը «նպաստում և մեծացնում է հասարակության արտադրողական ուժը»: Անարտադրողական աշխատանքից ստացված ցանկացած եկամուտ արտադրողական աշխատանքով ստեղծված եկամտի պարզ վերաբաշխումն է միայն: Բանվորների կողմից աշխատավարձի սպառումն անգամ, ըստ Միրի, արտադրողական է, եթե ապահովում է բանվորի և նրա ընտանիքի գոյության համար անհրաժեշտ նվազագույն միջոցներ, և անարտադրողական է, եթե ապահովում է նաև «պերճանքի առարկաներ»¹⁴:

Տնտեսական ռոմանտիզմի նախահայրերն են Ս. Սիսմոնդին և Պ. Պրուտոնը: Դիտարկենք նրանց հայացքները եկամուտների ձևավորման տեսանկյունից միայն: Ս. Սիսմոնդին «Քաղաքատնտեսության նոր սկզբունքներ» իր գլխավոր աշխատությունում, որը լույս է տեսել 1819 թվականին՝ երկու հատորով, սկզբունքային անհամաձայնություն է արտահայտում, այսպես կոչված, դասական տնտեսագետների՝ երեք գլխավոր եկամուտների առաջացման վերաբերյալ մոտեցման նկատմամբ (ռենտա, շահույթ և աշխատավարձ)՝ սխալ համարելով նրանց տեսակետը «երեք տարբեր աղբյուրների՝ հողի, կուտակված կապիտալի և աշխատանքի» գոյության մասին: Նա պնդում էր, որ միայն բանվորն է իր եկամտից (աշխատավարձից) բացի ստեղծում նաև «հարուստների» եկամուտները և հատկապես՝ հողասեփականատերերի ռենտան ու կապիտալիստների շահույթը: Ձեռնարկատերը շահույթ է ստանում, որովհետև «բանվորն իր աշխատանքի համար բավարար վարձատրություն չի ստանում», իսկ աշխատավարձն «այն գինն է, որի դիմաց ունևորը ձեռք է բերում չունևորի աշխատանքը», և «ձեռնարկատիրոջ հատուցումը հաճախ ոչ այլ ինչ է, եթե ոչ բանվորին կողոպտել»¹⁵: Համաձայն ժամանակակից հայ տնտեսագետների՝ Ս. Սիսմոնդին «շահույթը բնութագրել է որպես կապիտալիստի եկամուտ, որն իրե-

¹⁴ Ядгаров Я.С., ցիվ. աշխ., էջ 114:

¹⁵ Ж. Симонд де Сисмонди, Новые начала политической экономии, т. I. М. 1937, с. 187

նից ներկայացնում է բանվորի աշխատանքի արդյունքից մասսհանում»¹⁶: Այսպիսով, ըստ Ս. Միսմոնդիի՝ և՛ շահույթը, և՛ ռենտան ուղղակի մասսհանում են բանվորի եկամտից: Եկամուտների հարցը մա քննարկում է բնակչության բնականոն աճն ու բարեկեցությունը ապահովելու նպատակով. «...հարստությունը, որքանով որ բոլոր նյութական բարիքների մարմնացումն է, կարող է ծառայել համընդհանուր բարօրությանը միայն այն դեպքում, երբ դրա աճը համապատասխանի ազգաբնակչության աճին և եթե բաշխվի որոշակի համամասնությամբ»¹⁷: Հեղինակը առկա թերությունները կապում է բացառապես բաշխման համակարգի հետ՝ դա համարելով անարդարացի: Այդ կապակցությամբ մա գրում է. «Խսկական դժբախտությունը ո՛չ թե մեքենաների կատարելագործումն է, այլ արդյունքների անարդարացի բաշխումը»¹⁸:

Պ. Պրուդոնը, ըստ էության, համակարծիք էր Ս. Միսմոնդիի հետ այն հարցում, որ աշխատանքի դիմաց բանվորին վճարում են արտադրության գործընթացում ստեղծված եկամտի միայն մի մասը:

Բնակչության եկամուտների ձևավորման տեսության մեջ մեծ ներդրում ունեցան գերմանացի տնտեսագետներ Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը՝ հիմնավորելով արժեքի աշխատանքային տեսությունը, համաձայն որի՝ աշխատանքը նոր արժեքի և եկամտի ստեղծման գլխավոր աղբյուրն է: Ժամանակակից որոշ տնտեսագետներ և քաղաքագետներ մերժում են Մարքսի և Էնգելսի ուսմունքը, սակայն, կարծում ենք, պետք է ոչ թե մերժել, այլ վերաիմաստավորել:

Յավոք, Կ. Մարքսը համախառն եկամտի հարցն ամբողջությամբ չքննարկեց, բայց և այնպես եկամուտների առանձին տեսակներ մրա աշխատություններում հատուկ ուշադրության արժանացան:

Բանվորների կողմից աշխատավարձի ստացումը Կ. Մարքսը մեկնաբանում է որպես կապիտալիստներին «աշխատուժի» վաճառքի արդյունք, այլ ոչ թե հենց «աշխատանքի», ինչպես որ համարում էին դասական քաղաքատնտեսության հիմնադիրները: Համաձայն մարքսյան տեսության՝ աշխատավարձը համարժեք է բանվորի և մրա ընտանիքի գոյատևման համար անհրաժեշտ ապրանքների քանակին: Դրա մակարդակը կախված է աշխատանքի արտադրողականությունից, որն իր հերթին պայմանավորված է արտադրության մեքենայացման և տեխնոլոգիական հագեցվածության աստիճանով:

Աշխատավարձի մեծությունը որոշող գործոնները քննարկելիս Կ. Մարքսն անդրադարձել է աշխատուժի արժեքը բարձրացնող և իջեցնող գործոնների վերլուծությանը, ինչպիսիք են՝ աշխատանքի արտադրողականության աճը և դրա հետևանքով կենսամիջոցների էժանացումը, աշխատանքի արդյունավետության մեծացումը և միավոր ժամանակում աշխատ-

¹⁶ Գ. Կիրակոսյան, Մ. Թավադյան, Ս. Գրիգորյան, Տնտեսագիտական ուսմունքների պատմություն (ուսումնական ձեռնարկ), Եր., «Տնտեսագետ», 2004, էջ 182:

¹⁷ Ж. С. де Сисмонди., նշվ. աշխ., էջ 137:

¹⁸ Նույն տեղում, էջ 153:

ուժի ծախսերի ավելացումը, աշխատողի մասնագիտական պատրաստվածությունը, երկրի քաղաքակրթության աստիճանը և ձևավորված պահանջմունքների կառուցվածքն ու մակարդակը, բնակլիմայական պայմանները, սոցիալական կամ բարոյական բնույթի գործոնները և այլն¹⁹:

Մարքսյան ուսմունքում կարևոր գիտական արժեք են ներկայացնում անվանական և իրական աշխատավարձերի, իրական աշխատավարձի վրա ազդող գործոնների, աշխատավարձի ազգային տարբերությունների և աշխատանքի վարձատրության խտրականության հարցերը:

Մարքսյան ուսմունքի համաձայն՝ շահույթը հավելյալ արժեքի փոխակերպված ձևն է: Շահույթը, ըստ Կ. Մարքսի, ոչ թե արժեքի նկատմամբ է ավելցուկ եկամուտ, ինչպես համարում էին նրա նախորդները, այլ արտադրության ծախսերի: Նա կարծում էր, որ կապիտալիստների շահույթը պետք է ակնհայտ լինի նախքան բաշխվելը կամ իրացվելը, և կուրություն է շահույթի առաջացումը նրա բաշխմամբ բացատրելը²⁰:

Բնակչության եկամուտների հարցի հետ կապված՝ Կ. Մարքսն անդրադարձել է նաև առևտրային շահույթի և փոխատվական տոկոսի հարցերին՝ դրանք համարելով արտադրության ոլորտում ստեղծված շահույթի վերաբաշխումից ստացված եկամուտներ:

Ըստ «Կապիտալի» հեղինակի՝ ձեռներեցի եկամուտը (հատուցումը) կրում է աշխատավարձի ձև, քանի որ իրական կապիտալիստը դրամական կապիտալիստի նկատմամբ հանդես է գալիս «սոսկ կառավարչի», «աշխատողի և այն էլ՝ վարձու աշխատողի» դերում²¹: Սակայն տնտեսագիտության տեսության մարքսյան ըմբռնման մեջ «ձեռներեցություն» կատեգորիայի անտեսումը բացատրվում է ոչ միայն գաղափարական դրդապատճառներով, այլ նաև վերլուծության ընդունված մեթոդաբանությամբ և առաջին հերթին՝ արտադրության տեխնիկական մակարդակի անփոփոխության նախադրյալներով:

Համաձայն Կ. Մարքսի տեսակետի՝ հողային ռենտայի աղբյուրը վարձու աշխատողին չվճարված աշխատանքն է, այսինքն՝ աշխատանքով ստեղծված հավելյալ արժեքի մի մասը: Ռենտայի՝ որպես եկամտի տեսակի էության քննարկման ժամանակ մա նշում է. «Հողային ռենտան այստեղ այն տնտեսական ձևն է, որով հողային սեփականությունը տնտեսապես իրացվում, արժեք է բերում»²²:

Մարծինալիզմը տնտեսագիտական կարևորագույն ուղղություններից է: Դրա ներկայացուցիչներն են Կ. Մենգերը, Ու. Ջևոնսը, Ֆ. Վիգերը, Ե. Բեմ-Բավերկը, Ջ. Կլարկը, Վ. Պարետոն: Նրանք հիմնականում ուսումնասիրեցին միկրոէկոնոմիկան, տնտեսական հիմնախնդիրների լայն շրջանակի վերլուծության համար կիրառեցին «սահմանային օգտակարության

¹⁹ Տե՛ս Գ. Կիրակոսյան, Մ. Թավադյան, Ս. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 219-220:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 220:

²¹ Տե՛ս Կ. Մարքս, Կապիտալ, երրորդ հատոր, առաջին մաս, Պետական հրատարակչություն, Եր., 1949, էջ 370:

²² Նույն տեղում, երկրորդ մաս, էջ 162:

նվազման օրենքը»: Սահմանային օգտակարության տեսությունը տեսակա-
նորեն հիմնավորեց բնակչության ապահովված խավի եկամուտների մի
մասի փոխանցումը աղքատներին, պակաս ապահովվածներին: Ըստ մար-
ժինալիստների՝ հասարակության եկամուտները օգտակարության զանգ-
վածն են բոլոր անհատների համար, իսկ դրանց բաշխումը միշտ պետք է
քանակապես հաշվարկվի և հավասար լինի բարեկեցության առավելագույն
մեծությանը:

Մարժինալիզմի ներկայացուցիչ Ջ.Կլարկը իր «Հարստության բաշխու-
մը» աշխատությունում անդրադարձավ արդարացի բաշխման հիմնա-
խնդիրներին: Նրան հաջողվեց վերլուծել արտադրության բոլոր գործոննե-
րից ստացվող եկամուտները: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ար-
տադրության գործոնից եկամուտը որոշվում է դրա սահմանային արտադ-
րողականությամբ, աշխատավարձը պետք է հավասար լինի բանվորի սահ-
մանային արդյունքին: Նույնկերպ՝ տոկոսը պետք է հավասար լինի սահ-
մանային կապիտալի սահմանային արդյունքին²³: Այսպիսով՝ արտադրու-
թյան գործոնների միջև բաշխվում է թողարկված արտադրանքի 100 տոկո-
սը, ընդ որում՝ ոչ ավելի, ոչ պակաս:

Ջ. Կլարկը ցույց տվեց, որ եկամուտների բաշխման ընդհանուր տեսու-
թյան դրույթները համատեղելի են գործոնների ցանկացած քանակով ար-
տադրված ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի մրցակցային գնա-
գոյացման հետ: Այդ պարզ, բայց հզոր տեսությունը ցույց է տալիս, թե
մրցակցային շուկայական տնտեսությունում ինչպես են փոխկապված
եկամուտների բաշխումը և արտադրողականությունը:

Նշված հայեցակարգի ավելի ուշ շրջանի կողմնակիցներից են Ա. Պի-
գուն, Ա. Մարշալը, Վ. Պարետոն, Մ. Ֆրիդմանը և ուրիշներ, ովքեր զարգաց-
րին հասարակության սոցիալ-տնտեսական գործընթացներին պետության
չմիջամտելու տեսությունը:

Ա. Պիգուի համար կենտրոնական է համարվում եկամտի խնդիրը²⁴:
Համաձայնվելով նորդասականների հետ՝ նա ընդունում է, որ եկամուտը
որոշակի ժամանակաշրջանում արտադրության գործոնների (կապիտալ,
հող, ձեռներեցություն և աշխատանք) գործողության արդյունք է: Այդ գոր-
ծոններից յուրաքանչյուրին «վերագրվում է» եկամտի որոշակի մաս²⁵: Ըստ
Պիգուի՝ յուրաքանչյուր եկամուտ ենթակա է սահմանային օգտակարու-
թյան նվազման ներգործությանը: Դրանի աճին զուգընթաց, լրացուցիչ
միավորների օգտակարությունը սեփականատիրոջ համար նվազում է, իսկ
պահանջարկի սահմանները, որ որոշվում են քանկությունների որոշակի
մեծությամբ, ընդլայնվում են, ընդ որում՝ նա պատրաստ է բարիքի համար
վճարել ավելի շատ ցանկությունների իմտենսիվությանը, քան փողի սահ-
մանափակությանը համապատասխան²⁶: Ըստ այդմ՝ Պիգուն առաջինը

²³ St'g'u Классика экономической мысли. М., „ЭКСМО- пресс“, 2000, էջ 95:

²⁴ St'g'u Пигу А., Экономическая теория благосостояния, ч. I. М., „ Прогресс“, 1985, էջ 18:

²⁵ St'g'u նույն տեղը, էջ 27-28:

²⁶ St'g'u նույն տեղը, էջ 24:

հանգեց այն եզրակացության, որ ընդհանուր բարեկեցությունը կարելի է ավելացնել եկամուտների վերաբաշխման ճանապարհով. «...հասարակության համեմատաբար հարուստ խավերի իրական եկամուտների որոշակի իջեցման հաշվին չունեող խավերի իրական եկամուտների ցանկացած նշանակալի բարձրացում... հանգեցնում է տնտեսական բարեկեցության աճի»²⁷: Թեև որոշ տնտեսագետներ քննադատեցին նշված մոտեցումը, սակայն, մեր կարծիքով, այն արժանի է ուշադրության, քանի որ կարևոր դրույթ է հասարակության եկամուտների և բարեկեցության տեսության մեջ:

Բնակչության եկամուտների և դրանց բաշխման տեսության մեջ մեծ ներդրում ունի Ալֆրեդ Մարշալը, որը կարծում է. «Ազգային շահաբաժինը միաժամանակ և՛ երկրի ներսում արտադրության բոլոր գործոնների համախառն զուտ արդյունքն է, և՛ այդ գործոնների վճարման միակ աղբյուրը. այն բաժանվում է աշխատանքից ստացվող եկամտի, կապիտալի դիմաց՝ տոկոսի և վերջապես՝ արտադրողի համար ավելցուկի, հողից ռենտայի կամ արտադրության համար այլ տարբերակված առավելությունների»²⁸:

Հետևաբար՝ հեղինակը եկամուտները դիտարկում էր որպես արտադրության համապատասխան գործոնների ծնունդ: Որպես հիմնական եկամուտներ գերազանցապես ընդունվում էին աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, տոկոսը և ռենտան: Ընդ որում՝ աշխատավարձը և ձեռնարկատիրական եկամուտը դիտարկվում էին որպես աշխատանքի դիմաց վճար, այն տարբերությամբ միայն, որ աշխատավարձը տրվում է վարձու աշխատանքի, իսկ ձեռնարկատիրական եկամուտը՝ ձեռներեցի աշխատանքի դիմաց: Մարշալի ուսումնասիրությունները մեծ նշանակություն ունեն բնակչության եկամուտների վերլուծության համար: Նրա հիմնադրույթներն օգնում են համախառն եկամտի հարցերի դիտարկմանը արտադրական և սպառման մոտեցումների զուգակցման տեսանկյունից:

Տնտեսական լիբերալիզմի տեսության մեջ եկամուտների քաղաքականությունը հիմնվում է «անտեսանելի ձեռքի», «սոցիալական հավասարեցման» և «եկամուտների արդարացի բաշխման» սկզբունքների զուգակցման գաղափարի վրա: Այդպիսի մոտեցմամբ է կառուցված նեոլիբերալների ստեղծած շուկայական տնտեսության սոցիալական մոդելը: Համաձայն այդ մոդելի՝ պետությունը ակտիվորեն պետք է իրականացնի սոցիալական գործառույթներ, ինչպես նաև լուծի եկամուտների ստացման և ժողովրդի բարեկեցության ապահովման խնդիրներ, այսինքն՝ ձգտի եկամուտների արդարացի բաշխման, սակայն գլխավոր դերը պետք է կատարեն շուկայական մեխանիզմները:

Ջ. Զեյնսը և նրա հետևորդները դիտարկեցին բնակչության եկամուտների ձևավորման մակրոտնտեսական հիմնախնդիրները: Դրա գաղափարական հիմքն այն է, որ բնակչության եկամուտների ոլորտում շուկայական մեխանիզմը կատարյալ չէ, և մեծամասնության զբաղվածությունն ու հասարակության բարեկեցությունը կարող է ապահովել միայն պետությունը:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 161:

²⁸ Տե՛ս *Маршалл А., Принципы экономической науки*, т. II. М., „Прогресс“, 1993, էջ 239:

Ջ. Քեյնսը, հակադրվելով դասական տնտեսագիտությանը, առաջ քաշեց դրամական աշխատավարձի փոփոխության իր տեսակետը: Գիտնականը առանձնացրեց «դրամական պատրանքներ» հասկացությունը, համաձայն որի՝ մարդիկ արձագանքում են անվանական, այլ ոչ թե իրական աշխատավարձի կրճատմանը: Ըստ նրա՝ եկամուտը սպառումը որոշող հիմնական գործոնն է, այսինքն՝ «սպառումը, իհարկե, ավելի շուտ (որոշակի իմաստով) ֆունկցիա է իրական, քան դրամական եկամտից»²⁹: Մակայն այդ դեպքում ամբողջ եկամուտը չի ծախսվում սպառման նպատակով: Դա կախված է օբյեկտիվ (արտաքին պայմաններից) և սուբյեկտիվ գործոններից: Սուբյեկտիվ գործոնները պայմանավորված են մարդկային բնութագրի հոգեբանական առանձնահատկություններով, որի էությունը հետևյալն է՝ որ եկամտի աճին և հարստության մեծացմանը զուգընթաց սպառման նկատմամբ հակվածությունը նվազում է, իսկ խնայողության նկատմամբ՝ աճում³⁰: Հարկ է նշել նաև, որ հենց Ջ. Քեյնսն էր, որ մեծ ներդրում ունեցավ ներկայում կիրառվող ազգային հաշիվների համակարգի զարգացման գործում: Ըստ նրա՝ դա փոխկապված ցուցանիշների համակարգ է (եկամուտ, սպառում, խնայողություն), որի տվյալները հետաքրքրություն պետք է ներկայացնեն պետական կառավարման մարմինների համար տնտեսական քաղաքականության որոշումներ ընդունելիս և շուկայական տնտեսության կարգավորման չափորոշիչներ մշակելիս³¹:

Ուշադրության է արժանի նաև ինստիտուցիոնալ տեսությունը, որի ներկայացուցիչներն են Գ. Բեկկերը, Ջ. Ջիլբրեյթը, Ռ. Քոուզը և ուրիշներ, որոնք որպես հասարակության զարգացման լծակ դիտարկեցին սոցիալական, իրավական, հոգևոր և պատմական գործոնները:

Մասնավորապես՝ Գ. Բեկկերը նշում է, որ, եկամտի մակարդակին համապատասխան, ձևավորվում է անհատի որոշակի վարքագիծ: Մարդիկ ամուսնանում կամ ամուսնալուծվում են՝ ղեկավարվելով իրենց բարեկեցության մակարդակի փոփոխությունների սպասումներով: Շոշափելի եկամտի դեպքում մարդը ձգտում է մեծացնել իր ազատ ժամանակը, փոխել ընտանեկան կարգավիճակը և այլն³²: Նա կարծում է, որ սեփականությունից ցանկացած մարդու ստացած եկամուտը կարելի է բաժանել «ելակետային» և որպես կապիտալի կուտակման սեփականատեր ձեռք բերածի: Սեփականությունից «ելակետային» եկամուտը ձեռք է բերվում ժառանգման ճանապարհով³³: Սեփականությունից ստացած «սեփական» եկամուտը կախված է ֆիզիկական կապիտալում ներդրումների ծավալից և օգուտների ու ծախսերի հետ կապված ռացիոնալ կշռվածությունից: Աշխատավարձը և եկամտի մյուս տեսակները նույնպես կախված են այդ գործոններից³⁴:

²⁹ Տե՛ս Ջ. Քեյնս, Ջրաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Եր., «Տիգրան Մեծ», 2006, էջ 102:

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 108:

³¹ Տե՛ս Экономическая статистика / под ред. Иванова Ю./, М., „Инфра – М“, 2004, էջ 130:

³² Տե՛ս Беккер Г., Человеческое поведение. М., ГУ ВШЭ, 2003, էջ 142:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 138:

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 141:

Համաձայն ինստիտուցիոնալիստների հիմնադրույթների՝ մարդը ընտրում է այն գործողությունը, որն առավելապես համապատասխանում է հասանելի արդյունքներից լավագույնի մասին նրա պատկերացմանը, բայց նրան հասանելի գործողությունները հակասում են մյուսների շահերին: Բաշխումն անհամաչափ է կատարվում, ուստի անհրաժեշտ է այդ գործընթացների նկատմամբ խիստ հսկողություն սահմանել: Ըստ այդ տեսության՝ հոգուտ աղքատների և միջին խավի հասարակության հարստության վերաբաշխման հետևանքով տեղի է ունենում կապիտալիզմի սոցիալական վերածնունդ:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլում առաջին պլան են մղվել նյութական անկախության հիմնախնդիրները: Դրանց լուծումը, այսինքն՝ բնակչության եկամուտների ձևավորման մեջ տնտեսական անկախության և վաստակի կորստի դեպքում սոցիալական աջակցության պետական մեթոդների զուգակցումը արդիական է զարգացած երկրներում:

Այսպիսով՝ չնայած հայացքների տարբերություններին, տնտեսագիտական դպրոցները միասնական են այն հարցում, որ արտադրության յուրաքանչյուր գործոն պայմանավորված է որոշակի եկամուտներով:

Եկամուտների գործոնային աղբյուրներ են համարվում տնտեսական ռեսուրսները: Դրանք այն բնական, սոցիալական և հոգևոր ուժերի ամբողջությունն են, որոնք կարող են օգտագործվել ապրանքի, ծառայության կամ այլ արժեքների ստեղծման գործընթացում, իսկ «արտադրության գործոնը» տնտեսական կատեգորիա է, որը նշանակում է արտադրական գործընթացում արդեն ներգրավված իրական ռեսուրսներ: Արտադրության գործոնները արտադրական ռեսուրսներն են, բայց, ի տարբերություն ռեսուրսների, այդպիսին դառնում են միայն իրենց փոխգործողության շրջանակներում:

Արտադրության գործոնների փոխգործողության հետևանքով ստեղծվում է նոր արժեք, որը դառնում է բնակչության եկամուտների ձևավորման աղբյուր (գծապատկեր 1):


Ամերիկացի տնտեսագետներ Կ. Մակկոնելլը և Ս. Բրյունը իրենց հայտնի «Էկոնոմիկս» աշխատությունում արտադրության գործոնների տեսության հիման վրա դիտարկում են բնակչության եկամուտների ձևավորման (բաշխման) երկու փոխկապված եղանակներ՝ ֆունկցիոնալ և անձնական³⁵: Եկամուտների ֆունկցիոնալ ձևավորումը որոշվում է այն եղանակով, ըստ որի՝ հասարակության դրամական եկամուտները տրոհվում են աշխատավարձի, ռենտայի, տոկոսի և շահույթի: Այս դեպքում համախառն եկամուտը բաշխվում է նրանց միջև, ովքեր տնտեսությունն ապահովում են տարատեսակ ռեսուրսներով (արտադրության գործոններով)՝ եկամուտը ստացողի կողմից իրականացրած գործառնությին համապատասխան: Աշխատավարձը տրվում է աշխատանքի դիմաց, ռենտան և տոկոսը՝ ինչ-որ մեկի սեփականություն հանդիսացող ռեսուրսների դիմաց, շահույթը կապիտալի

³⁵ St'и Макконнелл К., Брю С., Экономикс: принципы, проблемы и политика /пер. с 11-ого англ. изд./, т. 1. М., „Республика“, 1992, էջ 140-141

տիրապետման դիմաց: Եկամուտների անձնական բաշխումը կատարվում է այնպիսի եղանակներով, որոնցով նաև հասարակության համախառն եկամուտն է բաշխվում առանձին տնային տնտեսությունների միջև:

Գծապատկեր 1

Արտադրության գործոնների տեսության համաձայն՝ գործոնային եկամուտների ձևավորման ուրվագիծ



Ինչպես արդեն նշել ենք, աշխատանքի (աշխատուժի) դիմաց հատուցումը կատարվում է աշխատավարձի ձևով: Հողի և կապիտալի տրամադրման հետ կապված՝ եկամուտները, ընդհանուր առմամբ, ներկայացնում են սեփականությունից ստացվող եկամուտները: Ձեռնարկատիրական եկամուտը շահույթն է, դրան հավասարեցված եկամուտները կամ խառը եկամուտները: Այսպիսով՝ յուրաքանչյուր ռեսուրսին (արտադրության գործոնին) համապատասխանում է եկամուտների որոշակի կատեգորիա. աշխատավարձը տրամադրվում է կատարված աշխատանքի դիմաց, ռենտան և տոկոսային եկամուտը վճարվում են սեփականատերերին՝ օգտագործվող հողի, բնական ռեսուրսների, ֆիզիկական և դրամական կապիտալի դիմաց, ձեռնարկատիրական եկամուտը մնում է ձեռնարկատիրոջ տնօրինմանը³⁶:

Բնակչության եկամուտների ձևավորման հարցի վերաբերյալ ներկայացված տարբեր մոտեցումների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ այդ գործընթացն անցնում է երկու փուլ: Առաջին փուլում արտադրության գործոնների փոխներգործության հետևանքով ստեղծվում է նոր արժեք, իսկ երկրորդում իրականացվում է նոր ստեղծված արժեքի բաշխում, որը հիմնված է սեփականության հարաբերությունների, այսինքն՝ արտադ-

³⁶ См. у Ананьев А., Лыкова Л., Ильин И. и др., Политика доходов и заработной платы /под ред. Савченко П., Кокна Ю./, „Экономист“, 2004, էջ 90:

րության գործոնների տիրապետման վրա: Պետական բյուջեի միջոցով եկամուտների վերաբաշխմամբ ավարտվում է բնակչության եկամուտների վերջնական ձևավորման գործընթացը:

Այսպիսով՝ բնակչության եկամուտների ձևավորումը տեսականորեն բխում է բնակչության եկամուտների՝ որպես տնտեսական կատեգորիայի էությունից և ներառում է դրանց ձևավորման տեսությունների ընտրությունը, որոնք էլ որոշում են բնակչության եկամուտների բովանդակությունը և կառուցվածքը:

Եկամուտների ձևավորումը պայմանավորող տնտեսական հարաբերությունների սուբյեկտներ են բնակչությունը, ձեռնարկությունները (կազմակերպությունները) և պետությունը:

Դրան համապատասխան էլ բնակչության եկամուտների կառուցակարգում (ձևավորման մեխանիզմում) կարելի է առանձնացնել երեք մակարդակ.

Առաջին՝ *ձեռնարկության*՝ որպես տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքում ձևավորվում է նոր ստեղծված արժեքը: Դրա բաշխումն իրականացվում է արտադրության գործոնների սեփականությունից ելնելով: Ըստ այդմ ձևավորվում են առաջնային (գործոնային) եկամուտները աշխատավարձի, ռենտայի, տոկոսի և շահույթի ձևով, իրացվում են վարձու աշխատողի (աշխատուժի սեփականատիրոջ) և գործատուի (արտադրության միջոցների սեփականատիրոջ) միջև տնտեսական հարաբերությունները:


Երկրորդ՝ *պետության* մակարդակում տեղի է ունենում եկամուտների վերաբաշխում: Բնակչության եկամուտները ձևավորվում են տրանսֆերտային վճարների (կենսաթոշակ, կրթաթոշակ, նպաստ, փոխհատուցում, արտոնություն և այլն), ինչպես նաև բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձի ձևով:

Բնակչության եկամուտների ձևավորման տնտեսական հարաբերություններում պետությունը հանդես է գալիս կառավարման հանրապետական և տարածքային մակարդակներում որոշակի կառուցվածքային ստորաբաժանումների ձևով, որին մասնակցում են նաև սոցիալական ապահովագրության պետական ծառայությունը, զբաղվածության ծառայությունը և այլն:

Երրորդ՝ *բնակչության* մակարդակում կրկին տեղի է ունենում եկամուտների վերաբաշխում (ինչպես անհատների, այնպես և խմբերի միջև): Դրանից ելնելով, որպես տնտեսական հարաբերությունների սուբյեկտ, բնակչությունը դիտվում է ոչ թե մեկ ամբողջություն կամ տնային տնտեսությունների, ֆիզիկական անձանց համախմբություն, այլ, եկամուտների ձևավորման աղբյուրներով և այլ սուբյեկտների հետ փոխհարաբերությունների բնույթով պայմանավորված, տրոհվում է անհատների և որոշակի խմբերի:

Դիտարկված մակարդակների միջև գոյություն ունի փոխկապվածություն ինչպես ըստ եկամուտների ձևավորման հաջորդականության, այնպես էլ ըստ դրանց ֆունկցիոնալ բովանդակության (գծապատկեր 2):

*Բնակչության եկամուտների ձևավորման մակարդակների միջև
փոխկապվածության ուրվագիծ*



Ուսումնասիրվող տնտեսական հարաբերությունների հիմնական օբ-
յեկտներ են համարվում աշխատավարձը, սեփականությունից ստացված
եկամուտները, ձեռնարկատիրական գործունեությունից առաջացած եկա-
մուտները և այլն: Դրանց ձևավորման կապակցությամբ տնտեսական
հարաբերությունների մեջ են մտնում համապատասխան սուբյեկտները:

Բնակչության եկամուտների ձևավորումը կատարվում է համապա-
տասխան մեթոդների և գործիքների միջոցով:

Այդ մեթոդներն են.

1. տնտեսական,
2. վարչական,
3. համաձայնողական:

Տնտեսական մեթոդները նախատեսում են բնակչության արժանապա-
տիվ կենսամակարդակ ապահովող եկամուտների ձևավորում: Դրանցից,
նախևառաջ, պետք է նշել ինդեքսավորումը և հարկումը:

Բացի քվարկվածներից, տնտեսականի շարքը կարելի է դասել նորմա-
տիվային մեթոդը, որը նախատեսում է եկամուտների ձևավորումը սահ-
մանված նորմատիվներին (աշխատանքային, սոցիալական, իրավական)

համապատասխան, նյութական խթանման մեթոդը, որը եկամուտների (հատկապես աշխատավարձի) առաջացումը պայմանավորում է աշխատանքի արդյունքների աճով, դրանց նշանակության և արդյունավետության մեծացմամբ, ինչպես նաև տնտեսական վերլուծության մեթոդը, որը, հետագուտելով եկամուտների ձևավորման գործընթացի վրա ազդող պատճառները և գործոնները, հիմնավորում է բնակչության եկամուտների մեծացման անհրաժեշտությունը և եղանակները:

Այսպես՝ վարձու աշխատողների եկամուտների ձևավորման ժամանակ տնտեսական նորմատիվների մեթոդի օգտագործումը թույլ է տալիս պահպանել գործող իրավական նորմերը և պայմանագրային հարաբերությունները, աշխատավարձի ինդեքսավորումը:

Վարչական մեթոդները շուկայական տնտեսության պայմաններում ներառում են բնակչության եկամուտների ձևավորման գործընթացների և դրանց վրա ազդող գործոնների ուղղակի հսկողություն, բնակչության կյանքի նվազագույն հասանելի պարամետրերի հստակեցում և պահպանում, պետության կողմից կենսաթոշակների, նպաստների և սոցիալական այլ տրանսֆերտների նշանակման կարգի, բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձի սահմանում և այլն:

Եկամուտների ձևավորման վրա միջնորդավորված ձևով ազդում է նաև արժեզրկման և արտադրության փոխարժեքի նկատմամբ հսկողությունը:

Համաձայնողական մեթոդները, որոնք հիմնված են սոցիալական գործընկերության վրա, արտահայտվում են բնակչության եկամուտների ձևավորմամբ, մասնավորապես՝ աշխատավարձի, սոցիալական վճարների գծով կառավարության, ձեռնարկատերերի և վարձու աշխատողների գործողությունների համաձայնեցում: Բնակչության եկամուտների կարգավորման յուրաքանչյուր մեթոդ իրացվում է ներգործության ուղղակի և անուղղակի ձևերով: Պետության ուղղակի (վարչական) միջամտության ձևերից են տրանսֆերտային վճարները, սոցիալական երաշխիքները (աշխատավարձի նվազագույն չափը, կենսաապահովման նվազագույն զամբյուղը և բյուջեն, առողջապահության և կրթության ոլորտում պետական ֆինանսավորման չափը), եկամուտների ինդեքսավորումը և փոխհատուցումը, սոցիալական ծրագրերը:

Եկամուտների ձևավորման անուղղակի ձևերից են անապահով խավերի համար հարկային արտոնությունների սահմանումը, գների և սակագների պետական հսկողությունը, հարկերի շերտավորումը, արտաբյուջետային ֆոնդերին հատկացումները, բարեգործական հիմնադրամները, հարկային և մաքսային դուրյաչափերը:

Բնակչության եկամուտների կարգավորման մեթոդների և իրացման ձևերի օգտագործումը պետությանը հնարավորություն է տալիս ազդելու դրանց կազմավորման վրա, մշակելու բաշխման և վերաբաշխման գործուն համակարգ՝ ապահովելով բնակչության եկամուտների աճ:

Նշված մեթոդները կիրառվում են համալիր՝ լրացնելով միմյանց: Դրանք ներգործում են բնակչության տնտեսական շահերի և հարաբերությունների վրա, օրինակ, մեխանիզմի գործողության կազմակերպչա-

վական և մեթոդաբանական ապահովմամբ: Կազմակերպահրավական ապահովումը ներառում է այն օրենսդրական նորմերը, որոնք կանոնակարգում են եկամուտների ձևավորումը, դրանց կազմը և չափերը:

Մեթոդական ապահովումը պայմանավորված է այնպիսի գործիքների օգտագործմամբ, որոնք կանոնակարգում են հաշվարկների իրականացումը և հաշորդականությունը, ցուցանիշների համակարգը և դրանց հիմնավորման եղանակները: Բնակչության եկամուտների ձևավորման դիտարկված մեխանիզմի բնորոշ առանձնահատկություններից է դրա երրորդ օղակը՝ բնակչությունը: Այդ մակարդակում եկամուտների ձևավորումը պայմանավորված է ֆիզիկական անձանց, բնակչության խմբերի, ընտանիքների և տնային տնտեսությունների միջև արդեն բաշխված եկամուտների վերաբաշխման գործընթացում դրսևորվող տնտեսական հարաբերություններով:

АРЦРУНИ ТОРОСЯН – Теория распределения доходов населения у истоков экономической мысли.- Статья посвящена исследованию наиболее актуальной проблемы экономической теории - формированию доходов населения.

Несмотря на довольно широкое освещение этой проблемы, начиная с философских учений древнего мира, меркантилистов, физиократов и заканчивая экономическими воззрениями современных рыночников, автором сделана попытка комплексно в хронологической последовательности рассмотреть механизм формирования доходов населения. С этой целью в статье с методических позиций проанализированы научные позиции многих представителей большинства экономических школ.

Глубокое теоретическое исследование проблемы позволило автору сделать ценные предложения концептуального характера, направленные на выявление взаимосвязей между уровнями формирования доходов населения и группировке их методов.

ARTSRUNI TOROSYAN - Theory of distribution of population's incomes at the very rise of economic thought.- The paper is devoted to the study of one of the most urgent issues of economic theory - to the formation of population's income.

Despite the broad interpretation of the problem given by ancient philosophers, merchantilists, physiocrats and opinions of modern marketers the author has made an attempt to consider chronologically the mechanism of income formation of the population. With that end in view scientific attitudes of a large number of representatives of most economic schools have been analyzed.

A profound theoretical study of the given issue has enabled the author to make valuable suggestions of conceptual character which aim at revealing the interconnections between the levels of income formation of the population and their grouping methods.